«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
Տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր

_____ Վ.Լ.Հարությունյան
17 դեկտեմբերի 2020թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, Ը.00.02 «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Մասնակցում էին՝ Վլադիմիր Հարությունյան՝ *ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ.*, Ռոբերտ Սարինյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ*, Տիգրան Հարությունյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, դոցենտ*, Քրիստինե Բաղդասարյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ*, Մերի Մանուչարյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Սվետլանա Դալլաքյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Լիլիթ Սարգսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Բելլա Գաբրիելյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Գևորգ Հարությունյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Տաթևիկ Փարսադանյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Գրիգոր Մանուկյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Եվգենյա Հակոբյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Շողեր Պողոսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Հանրապետության գյուղատնտեսությունն ունի կարևորագույն տեղ երկրի համախառն ներքին արդյունքի ձևավորման, հանրապետության բնակչության զբաղվածության ապահովման, գյուղական բնակավայրերի զարգացման և, որ ամենակարևորն է, բնակչության պարենային անվտանգության ապահովման համար, սակայն մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված՝ գյուղատնտեսությունում արդյու-

նաբերականացման մակարդակը զգալիորեն ցածր է, մասնավորապես ցածր է գյուղատնտեսության արտադրական գործընթացների մեքենայացման մակարդակը, որի հետևանքով բարձր է ձեռքի աշխատանքի տեսակարար կշիռը, գյուղատնտեսությունում չափազանց դանդաղ տեմպերով են ներդրվում արդիական այնպիսի տեխնոլոգիաները, որոնք նախապայման են հանդիսանում գյուղատնտեսությունում արտադրողականության բարձրացման և ոլորտի արդյունաբերականացման համար:

Նշվածն էլ պայմանավորում է ուսումնասիրվող թեմայի արդիականությունն ու հրատապությունը, որը բխում է հանրապետության գյուղատնտեսության զարգացման, առաջնահերթ անհրաժեշտ մթերքների արտադրության ծավալների ավելացման, դրանց որակի բարելավման և հանրապետության պարենային անվտանգության մակարդակի բարձրացման պահանջներից:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Աշխատանքի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման հիմնախնդիրների բացահայտումը և դրանց լուծման հիմնական ուղղությունների առաջադրումն է: Այդ նպատակի իրականացման համար աշխատանքում դիտարկվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել գյուղատնտեսության արդյունաբերականացման էությունը և առանձնահատկությունները,
- հիմնավորել գյուղատնտեսության արդյունաբերականացման անհրաժեշտությունը և դրան նպաստման մոտեցումները,
- գնահատել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրները,
- գնահատել գյուղատնտեսության արդյունաբերականացման գործոնների քանակական ազդեցությունը,
- առաջարկել գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղությունները,
- գնահատել գյուղատնտեսության արդյունաբերականացման առաջարկվող ուղղությունների տնտեսական արդյունավետությունը:

Ատենախոսության գիտական նորույթը և հիմնական արդյունքները

Հետազոտության հիմնական նորույթը կայանում է նրանում, որ գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրների բացահայտման արդյունքում՝ կանխորոշվել են դրանց լուծման հիմնական ուղղությունները: Հիմնական

գիտական արդյունքները պայմանավորված են հետազոտության շրջանակներում առաջադրված խնդիրներով, մասնավորապես.

- Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկությունների համատեքստում գնահատվել են ոլորտի արդյունաբերականացման պայմանները և գործոնները,
- բացահայտվել են Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրները,
- գնահատվել է գյուղատնտեսության արդյունաբերականացման վրա ազդող մի շարք գործոնների քանակական ազդեցությունը,
- մշակվել են գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղությունները,
- գնահատվել է գյուղատնտեսության արդյունաբերականացման առաջարկվող ուղղությունների տնտեսական արդյունավետությունը:

Ատենախոսության գիտագործնական նշանակությունը

ՀՀ գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրների բացահայտման և դրանց լուծման ուղղությամբ ատենախոսությունում իրականացված բազմակողմանի ուսումնասիրությունները և ներկայացված առաջարկությունները տեսական ու գործնական նշանակություն ունեն և կիրառության դեպքում կարող են իրական հիմք հանդիսանալ տվյալ բնագավառում քաղաքականության կատարելագործման, հայեցակարգերի, ծրագրերի մշակման համար:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների կողմից՝ համապատասխան քաղաքականության մշակման ու իրականացման ուղղությամբ, ինչպես նաև օգտակար լինել ատենախոսության մեջ առաջադրված խնդիրների հետազոտությամբ զբաղվող տնտեսագետների, ասպիրանտների և ուսանողների համար:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության ուսումնասիրության արդյունքում մեր կողմից բացահայտվել են որոշակի թերություններ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

1. Ատենախոսության առաջին գլխի «Գյուղատնտեսության արդյունաբերականացման անհրաժեշտությունը և դրան նպաստման մոտեցումները» 1.2. ենթագլխում հեղինակը գյուղատնտեսության արդյունաբերականացման անհրաժեշտությունը դիտարկել

է ոլորտում արտադրողականության բարձրացման, հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, պարենային անվտանգության, գյուղատնտեսության մեքենայացման միջոցների ապահովման շրջանակներում: Աշխատանքի առավել կշահեր, եթե հեղինակը՝ նշվածի հետ մեկտեղ, որպես արդյունաբերականացման անհրաժեշտ գործոն դիտարկեր նաև գյուղատնտեսության ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրումը:

2. Նույն գլխի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկությունները և ոլորտի արդյունաբերականացման պայմանները» 1.3. անվանումը կրող ենթագլխում գյուղատնտեսության արդյունաբերականացման պայմանների շրջանակներում դիտարկել է գյուղացիական տնտեսությունների չափերը (ինչպես գյուղատնտեսական հողատեսքերի, այնպես էլ անասնագլխաքանակի դիտարկմամբ), տեխնիկական միջոցների ապահովվածության և այլն: Ցանկալի էր, որ հեղինակը հիշատակված պայմանների շարքում դիտարկեր նաև գյուղատնտեսությունում աշխատուժի կարողությունների հարցը:

3. Ատենախոսության 2-րդ գլխի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման ներկայիս նախադրյալները» 2.2. ենթագլխում հեղինակը ոլորտի արդյունաբերականացման ներկայիս նախադրյալները հանգամանալի ներկայացրել է տարբեր միջազգային դրամաշնորհային ծրագրերի, գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի շրջանակներում: Աշխատանքը, մեր կարծիքով, առավել շահած կլիներ, եթե հեղինակը դիտարկեր նաև գյուղատնտեսության արդյունաբերականացման նախադրյալները՝ կապված գյուղատնտեսությունում տնտեսավարողների սեփական հնարավորությունների օգտագործման շրջանակներում:

4. Նույն գլխի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրները» 2.3. ենթագլխում ատենախոսը դիտարկել է ոլորտի արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրների լայն շրջանակ, մասնավորապես՝ ֆինանսական ապահովում, տնտեսությունների փոքր չափեր, տնտեսավարման ձևերի և ենթակառուցվածքների զարգացման անհրաժեշտ մակարդակի ապահովում, գիտելիքների և հմտությունների առկայության ապահովում, պետություն-մասնավոր հատված համագործակցության կատարելագործում, պետական ծրագրերի մեխանիզմների կատարելագործում: Ցանկալի կլիներ, որ ատենախոսը տնտեսական հիմնախնդիրների շարքում դիտարկեր նաև արդյունաբերականացման գործընթացում գյուղատնտեսությունում տնտեսավարողների խթանման հարցը:

Եզրակացություն

Արամ Հովհաննիսյանի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրները եվ դրանց լուծման ուղիները» թեմայով թեկնածուական ատենախոսության արդյունքներն ունեն ինչպես գիտական, այնպես էլ գործնական ու կիրառական նշանակություն:

Արամ Հովհաննիսյանի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրները եվ դրանց լուծման ուղիները» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետի և թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակ Արամ Հովհաննիսյանը արժանի է Ը.00.02- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (17.12.2020թ., արձանագրություն թիվ 9):

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտ.քարտուղար
գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ք. Բաղդասարյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու **Ս. Դալլաքյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ՏԻ ավագ գիտաշխատողներ, գիտ.քարտուղար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ք. Բաղդասարյանի և նույն ինստիտուտի գիտաշխատող տնտեսագիտության թեկնածու, Ս. Դալլաքյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում եմ»՝

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ.գ.դ., պրոֆ. **Վ.Լ. Հարությունյան**
«17» դեկտեմբերի 2020թ.